

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Դեկտեմբեր*

*2021թ.*

**31.12.2021**

**Մեղրի համայնքի ղեկավարությունը համայնքապետ Բագրատ Զաքարյանի գլխավորությամբ այցելել է սահմանին տեղակայված մարտական հենակետեր**

Տարեմուտի նախաշեմին Մեղրի համայնքի ղեկավարությունը համայնքապետ Բագրատ Զաքարյանի գլխավորությամբ այցելել է սահմանին տեղակայված մարտական հենակետեր, շնորհավորել մարտական հերթափոխն իրականացնող զինծառայողների Ամանորն ու Սուրբ Ծնունդը՝ մաղթելով նրանց քաջառողջություն և բարի ծառայություն: Համայնքի ղեկավարությունը մարտական հենակետերին է հանձնել նրանց համար տարված անհրաժեշտ պարագաներ:

Աղբյուրը՝

[https://m.facebook.com/story.php?story\\_fbid=6751161348290451&id=672473002826013&m\\_entstream\\_source=timeline](https://m.facebook.com/story.php?story_fbid=6751161348290451&id=672473002826013&m_entstream_source=timeline)

**30.12.2021**

**Աղբրեջանական տեսախցիկները Որոտանում անօրինական վերահսկողության ներքո են պահում բնակիչների տներ, մարդկանց անձնական և ընտանեկան կյանքը. ՄԻՊ**

Սյունիքի մարզի Գորիս համայնքի Որոտան գյուղի այս սեփական տունը աղբրեջանական տեսախցիկների մշտական վերահսկողության ներքո է: Այս տան հետ ևս 3 տուն, ինչպես նաև ձկնաբուծարանը աղբրեջանական տեսախցիկների ուղիղ վերահսկողության ներքո են:

Սա խախտում է բնակիչների ոչ միայն անվտանգ ու խաղաղ ապրելու, կյանքի իրավունքը, այլ նաև անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը, այդ կերպ առանց որևէ իրավական հիմքի հավաքվում են մարդկանց անձնական տվյալներ:

Տան բնակիչների վկայությամբ՝ աղբրեջանական զինված ծառայողները տեսախցիկները պարբերաբար պտտում իրենց տան կողմը՝ վերահսկելու համար տան անցուղարձը: Տեսախցիկն իրենց տան ուղղությամբ են պահում հատկապես այն ժամանակ, երբ տեսնում են, որ տանը սովորականից ավելի մարդկանց շարժ կա (օրինակ՝ էթե հյուրեր ունեն): Ակնհայտ է, որ դիտարկվում է այն ամենն ինչ կատարվում է տանը՝ ոչ միայն բակում:

Սյունիք վերջին այցի ընթացքում դրանում համոզվել եմ ինքս տեղում, երբ մեր աշխատակազմով այս տանն էինք և ինքներս տեսանք, որ աղբրեջանական զինված ծառայողները մեզ տեսնելուն պես տեսախցիկներից մեկն անմիջապես ուղղեցին դեպի մեզ:

Ի դեպ, այն տունը, որտեղ տեղակայված են աղբրեջանական զինված ծառայողներ և այնտեղից տեսախցիկներով վերահսկում են տան անցուղարձը, կադաստրային փաստաթղթով պատկանում է ՀՀ քաղաքացու (այս ապացույցը մենք արդեն հրապարակել ենք):

Այսինքն՝ ՀՀ քաղաքացուն սեփականություն հանդիսացող տանը տիրացել են հանցավոր արարքներով: Ընդ որում, սա Գորիս-Կապան ճանապարհի այն հատվածն է, որտեղ աղբրեջանական զինված ծառայողները, ինչպես հայտարարված է, սահմանել են, այսպես կոչված, սահմանային ու մաքսային վերահսկողություն, ինչը զուրկ է որևէ իրավական հիմքից:

Ադրբեջանական զինված, այդ թվում՝ Սահմանապահ, Ոստիկանության ծառայողները մշտապես ներկա են անմիջապես տան դիմաց: Ըստ քաղաքացիների հաշվարկի՝ ընդհանուր առմամբ՝ բոլորը միասին կլինեն մոտ 150-200 ծառայողներ: Ընդ որում, այդ բոլոր ծառայողները զինված են, մեծ մասը հիմնականում դիմակավորված է: Նրանք բացահայտ, ցուցադրաբար կանգնում են ճանապարհին կամ քաղաքացիական տների ուղղությամբ, որպեսզի հատուկ տեսանելի լինեն քաղաքացիական բնակիչներին:

Մենք արել էինք հրապարակում այն մասին, որ Գորիս-Կապան ճանապարհի այս հատվածում կա առնվազն 10 տեսախցիկ, որոնք վերահսկում են քաղաքացիական բնակիչների տեղաշարժը, խախտում են մարդկանց անձնական ու ընտանեկան կյանքը, հանցավոր արարքներով հավաքում են անձնական տվյալներ:

Ադրբեջանական զինված ծառայողների այս արարքները ևս ապացուցում են, որ նրանց ներկայությունն ինքնին խաթարել է Հայաստանի քաղաքացիական բնակչության բնականոն կյանքը, առաջացնում է մարդկանց իրավունքների զանգվածային խախտումներ, խաթարել անվտանգ ու խաղաղ ապրելու իրավունքը: Ուստի, նրանք չպետք է լինի մեր գյուղերի հարևանությամբ և ճանապարհներին, որպեսզի հնարավոր լինի վերականգնել խաղաղ բնակիչների իրավունքներն ու բնականոն կյանքը:

Այս փաստը ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում վերլուծվել է և կներառվի ադրբեջանական զինված ծառայողների անօրինականությունները հաստատող ապացույցների թվում՝ համապատասխան միջազգային աստիճաններ ուղարկելու նպատակով:

Աղբյուրը <https://hetq.am/hy/article/139564>

**29.12.2021**

### **Կապանում հյուպատոսություն բացելն ազդակ է առ այն, թե Իրանի համար որքան կարևոր է Սյունիքը. Ոսկանյան**

Իրանը Կապանում հյուպատոսություն է բացում: Եվս մեկ ազդակ առ այն, թե որքան կարևոր է համարում պաշտոնական Թեհրանը Հայաստանի Սյունիքի մարզը հայ-իրանական հարաբերությունների համատեքստում:

Հայաստան-Իրան հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ կարևոր քայլ կդիտարկվի նաև Ատրպատականի կենտրոն Թավրիզում մեր հյուպատոսության բացումը, որը նաև հստակ ազդակ կլինի Բաքվի բռնապետին:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/vardan.voskarian/posts/5094349127270172>

**29.12.2021**

### **Անցնող տարում միայն աշխատանքային խմբի խողովակով Սյունիքի մարզում իրականացվել է 1.1 մլրդ դրամի ծրագիր. Վարչապետ**

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ դեկտեմբերի 29-ին տեղի է ունեցել Սյունիքի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի ամփոփիչ նիստը:

Ինչպես «Արմենպրես»-ին հայտնում են ՀՀ կառավարությունից, բացելով նիստը՝ վարչապետ Փաշինյանը նշել է.

«Ինչպես գիտեք, սույն թվականի հունվարի 15-ին վարչապետի որոշմամբ ստեղծվեց Սյունիքի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, և մենք այսօր հավաքվել

ենք՝ ամփոփելու աշխատանքային խմբի այս տարվա արդյունքները: Պիտի արձանագրեմ, որ 2021 թվականի ընթացքում Սյունիքի մարզում աշխատանքային խմբի խողովակով հատկացվել և իրականացվել է շուրջ 1.1 մլրդ դրամի ծրագիր: Այդ ծրագրերն ունեն բավական լայն ընդգրկում՝ գյուղատնտեսությունից մինչև սպորտ, և կարծում եմ, որ այս նոր միջավայրում կարևոր նշանակություն են ունեցել և ունեն Սյունիքի մարզի դիմակայունությունը բարձրացնելու ու ամրապնդելու նկատառումով:

Ցանկանում եմ ընդգծել, որ այսօր էլ Սյունիքի մարզում լայն թափով ընթանում է այլընտրանքային ճանապարհների շինարարություն: Մա նույնպես չափազանց կարևոր ծրագիր է:

Ուզում եմ ասել նաև, որ մենք Սյունիքի մարզում միայն աշխատանքային խմբի խողովակով չէ, որ ծրագրեր ենք իրականացնում: Կուզենայի մի քանի ծրագրերի մասին խոսել: Մասնավորապես, կրթական ոլորտի: Հանրակրթության ոլորտում մեր ռազմավարական բարեփոխումները որոշել ենք սկսել հենց Սյունիքի մարզից, և այդ նոր մոդելն առաջինը փորձարկվում է Կապան խոշորացված համայնքում՝ Սյունիքի մարզկենտրոնում, որտեղ ծրագիր իրականացնելու համար Կառավարությունը 9 մլրդ դրամի հատկացում է իրականացնում: Այսպիսի ծրագրեր կներդրվեն նաև Սյունիքի մյուս խոշորացված համայնքներում:

Ցանկանում եմ հիշեցնել նաև, որ Եվրամիության հետ համագործակցության արդյունքում նախատեսվում է շուրջ 80 մլն եվրոյի ծրագիր իրականացնել Սյունիքի մարզում՝ գուտ մարզի դիմակայունությունը բարձրացնելու ծրագրի շրջանակում:

Այսօր մենք ակտիվ աշխատում ենք Հյուսիս-Հարավ ծրագրի իրականացման վրա՝ մասնավորապես, Միսիան-Քաջարան և Քաջարան-Ագարակ հատվածների շինարարության: Հույս ունենք գործընթացն արդեն մեկնարկել 2022 թվականի ընթացքում: Դա շատ խոշոր ծրագիր է, ընդ որում, ներառում է մի քանի կամուրջներ, 2 թունել՝ 7 և 8 կմ երկարությամբ: Ծրագիրը նույնպես շատ էական ազդեցություն է ունենալու ոչ միայն Սյունիքի մարզի, այլև, ընդհանրապես, Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման համար:

Ուզում եմ ընդգծել նաև, որ տարածաշրջանային կոմունիկացիաների բացման թեման նույնպես էական գործոն է Սյունիքի մարզի հետագա զարգացման համար: Մենք արդեն հայտարարել ենք, որ մեկնարկում ենք Երասխ-Ջուլֆա-Օրդուբադ-Մեղրի-Հորադիզ երկաթուղու Մեղրիի հատվածի շինարարության նախապատրաստական աշխատանքները: Պիտի ընդգծեմ, որ բոլորիս հայտնի հանգամանքների բերումով տարածաշրջանային կոմունիկացիաների բացման թեման ակնհայտորեն և հանրահայտ ձևով նաև որոշակի խնդիրներ և վտանգներ է պարունակում, բայց պիտի ընդգծեմ նաև, որ շատ մեծ հնարավորություններ է պարունակում: Մենք պետք է հետևողականորեն և համբերատար աշխատենք, որպեսզի վտանգները կառավարենք, իսկ հնարավորություններն ընդգծենք և կարողանանք ծառայեցնել Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ Սյունիքի մարզի հետագա բնականոն զարգացմանը»:

Վարչապետի խորհրդական, աշխատանքային խմբի ղեկավար Ռոբերտ Ղուկասյանն, անդրադառնալով խմբի գործունեությանը, նշել է, որ առայսօր գումարվել է 17 նիստ՝ Սյունիքի տարբեր բնակավայրերում: Խումբը գործել է շուրջօրյա աշխատանքի ռեժիմով և փորձել

հնարավորինս օպերատիվ արձագանքել խնդիրներին՝ շեշտը դնելով հատկապես սոցիալական, տնտեսական, անվտանգության բաղադրիչների վրա:

Ապա աշխատանքային խմբի անդամ, պատկան գերատեսչությունների ներկայացուցիչները զեկուցել են ըստ ոլորտների կատարված աշխատանքների մասին: Ներկայացվել են պաշտպանության, անվտանգ երթևեկության, ճանապարհաշինության, բնակարանաշինության, սոցիալական հարցերի լուծման, ենթակառուցվածքների բարելավման, շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ միջոցառումները:

Վարչապետին զեկուցվել է Սյունիքի մարզի այլընտրանքային ճանապարհների՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Գորիս-Կապան տեղամասի առանձին հատվածներում երթևեկության անխափանությունն ապահովելու նպատակով Հ-46 (Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան, Տանձավեր - Շուռնուխ, Որոտան - Խոտ և S-8-49, /S-8-48/ - Լձեն ճանապարհահատվածների կառուցման/վերակառուցման ընթացքի մասին:

Նշվել է, որ ընթացքի մեջ են գրունտային վիճակի ապահովման աշխատանքները, որոնք կերաշխավորեն այս ճանապարհահատվածների երթևեկելիությունը բոլոր տիպի մեքենաների համար, տարվա բոլոր եղանակներին: Նախատեսվում է, որ 2022թ. դրանք ամբողջությամբ ասֆալտապատված կլինեն: Նիկոլ Փաշինյանը ևս մեկ անգամ ընդգծել է նշված ճանապարհների կարևորությունը և հանձնարարել հնարավորինս արագացնել շինարարության ընթացքը:

Կառավարության ղեկավարին մանրամասներ են ներկայացվել Շուռնուխում կառուցվող թաղամասի շինարարության վերաբերյալ: Զեկուցվել է, որ աշխատանքները շարունակվում են, նախատեսվում է դրանք ավարտել պայմանագրով սահմանված ժամկետում՝ 2022 թ. առաջին կիսամյակում:

Վարչապետը հետաքրքրվել է նաև Սյունիքում գյուղուղորտի ներուժի ուսումնասիրության ուղղությամբ քայլերով: Ներկայացվել են ջրաբերիացման համակարգերի կառուցման, գյուղտեխնիկայի տրամադրման, բիզնես նախաձեռնությունների խթանման, մի շարք համայնքներում նոր ենթակառուցվածքների ձևավորման ուղղությամբ իրականացված միջոցառումները: Այս համատեքստում ընդգծվել է օժանդակություն ցուցաբերող փորձագիտական խմբի կարևոր դերը: Ռոբերտ Ղուկասյանը զեկուցել է, որ փորձագիտական խմբի կողմից ներկայում կատարվում է գյուղատնտեսական նշանակության հողերի թվայնացման աշխատանք, որը նախատեսվում է ավարտել մեկ ամսից: Արդյունքում ակնկալվում է ունենալ տնտեսական ներուժի գնահատում ըստ համայնքների, որի հիման վրա էլ յուրաքանչյուր համայնքի համար մշակվելու է գյուղատնտեսական ապագայի ծրագիր:

Նիկոլ Փաշինյանը հանձնարարել է աշխատանքն ավարտելուց հետո արդյունքները քննարկել շահագրգիռ գերատեսչությունների հետ և, որպես արդյունավետ գնահատվելու դեպքում, այն իրականացնել նաև մյուս մարզերի համար:

Մտքերի փոխանակության ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր և գաղափարներ, ներկայացվել են առաջարկներ:

Վարչապետ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել աշխատանքային խմբի և փորձագիտական խմբի անդամներին կատարված աշխատանքի համար և ընդգծել՝ Սյունիքի

մարզի զարգացման օրակարգը բավական ընդգրկուն է և պետք է համբերատար աշխատել նախանշված առաջնահերթությունների կյանքի կոչման ուղղությամբ:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1071976.html>

**28.12.2021**

### **Հաստատվել է Գորիսի պետական համալսարանի խորհրդի կազմը**

ՀՀ վարչապետի 27 դեկտեմբերի N 1493 – Ա որոշմամբ հաստատվել է Գորիսի պետական համալսարանի խորհրդի նոր կազմը: Շնորհավորում ենք խորհրդի նորընտիր անդամներին և մաղթում արդյունավետ աշխատանք:

**ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ**

[https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/varch/2021/12/1493\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2021/12/1493_1.pdf)

Աղբյուրը՝

<https://gorsu.am/news/%d5%b0%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%bf%d5%be%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%a3%d5%b8%d6%80%d5%ab%d5%bd%d5%ab-%d5%ba%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1%d5%ac%d5%bd%d5%a1%d6%80%d5%a1/>

**25.12.2021**

### **«Որակի նշան 2021՝ տարվա լավագույն ապրանքանիշ և հանրային ծառայող» մրցանակակիրները՝ Սյունիքից**

Դեկտեմբերի 19-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ արդեն ավանդույթ դարձած «Որակի նշան 2021՝ տարվա լավագույն ապրանքանիշ և հանրային ծառայող» մրցանակաբաշխությունը: Ուսումնասիրությունների, հետազոտությունների և հարցումների արդյունքում լավագույն ճանաչված հանրային ծառայողները, պետական համակարգի աշխատակիցներն ու ընկերությունները տարբեր անվանակարգերում ստացան մրցանակներ:

Ոլորտում իրականացրած բարեփոխումների և արդյունավետ աշխատանքի համար «Որակի նշան՝ հանրային ծառայող» մրցանակ տրվեց «Մեղրու ճանապարհաշինարարական և շահագործման ձեռնարկություն» ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանին: Համայնքում իրականացրած բարեփոխումների և արդյունավետ աշխատանքի համար «Հանրային ծառայող» մրցանակ տրվեց Կապան խոշորացված համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին:

**Հ.Գ**

«Սյունյաց երկիրը» շնորհավորում է Գևորգ Փարսյանին և Ազատ Գասպարյանին՝ վաստակած մրցանակի ու գնահատանքի համար, մաղթում նրանց նորանոր հաջողություններ՝ ի բարօրություն մեր երկրամասի:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/oraki-nshan-2021-tarva-lavaguyn-apranqanish-ev-hanrayin-tsarayokh-mrtsanakakirneri-syuniqits>

25.12.2021

### «Միսս Հայաստան 2021» է ճանաչվել գործիսեցի Սոնա Դավթյանը

Երեւանում կայացել է «Միսս Հայաստան 2021» ազգային գեղեցկության մրցույթը, որի հաղթողը դարձավ 20-ամյա Սոնա Դավթյանը: Հաղթողն ընտրվել է նախապես հայտարարված քվեարկության եւ ժյուրիի գնահատականի արդյունքում:

Սոնա Դավթյանը մրցույթում ներկայացնում էր Սյունիքի մարզը: Նա ծնունդով Գործիսից է, սովորում է Երեւանի պետական համալսարանի եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի իտալերենի եւ անգլերենի բաժնում:

Այս տարի մրցույթին մասնակցում էր 24 աղջիկ:

«Միսս Հայաստան» մրցույթը պետք է տեղի ունենար դեռեւս 2020 թ-ին, սակայն կորոնավիրուսով ո պատերազմով պայմանավորված՝ այն հետաձգվեց:

Աղբյուրը՝ <https://style.news.am/arm/news/85670/miss-hayastan-2021-e-tchanachvel-20-amyasona-davtyany-foto-video.html>

21.12.2021

### Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի կոչը՝ ՀՀ դատաիրավական համակարգին

Հետպատերազմյան դժվարին իրավիճակի, դառը հարվածների և նեղությունների դիմագրավման ծանրագույն ժամանակահատվածում, երբ թվում է՝ ավելի քան երբևէ, պետք է բռնուցք դառնայինք և միասնաբար պայքարեինք՝ ազգային-հայրենական մեր կյանքի այս վճռորոշ շրջանին բաժին հասած դժվարությունները հաղթահարելու և մեր առջև ծառայած մարտահրավերներին դիմագրավելու համար, մենք ականատես ենք լինում հող հայրենին պաշտպանելու հարցում իրենց պատրաստակամությամբ և սկզբունքայնությամբ աչքի ընկած արժանապատիվ հայորդիների նկատմամբ իրականացվող շղթայական հետապնդումների: Ուստի մեզ խորապես մտահոգում են աստվածաշունչ «Մի՛ փոփոխիր քո հայրերի հաստատած հավիտենական սահմանները» պատգամին հավատարիմ մեր հավատավոր զավակների նկատմամբ ՀՀ դատաիրավական համակարգի կողմից շարունակ ցուցաբերվող ընտրովի մոտեցումները:

Խոսքը մասնավորապես Միսսական ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանի և Գործիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի հանդեպ իրականացվող բացահայտ ճնշումների մասին է, որոնց նպատակն է լռեցնել իշխանության ընդդիմախոսներին և նրանց թույլ չտալ համայնքների բնակչության հետ ամուր կանգնել հայրենի հողի պաշտպանության դիրքերում:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով, ինչպես նաև նկատի ունենալով այն փաստը, որ մեր երկիրը մարդասիրական վերաբերմունք է ցուցաբերում գերի ընկած աղբրեջանցի դիվերսանտների նկատմամբ՝ իբրև բարի կամքի

դրսևորում ազատ արձակելով նրանց՝ Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմը հույս է փայփայում, որ մեր դատական համակարգում կգտնվեն հավատավոր քրիստոնյաներ, որոնք, քրիստոնեական նույնափսի մարդասիրությամբ լցված, օրենքների արդարացի կատարմանը հետևելով, Սուրբ ծննդյան տոներին ընդառաջ հնարավորություն կտան նաև հայրենի հողի համար պայքար մղած հայորդիներին գալիք տոները նշելու իրենց տանը ընտանքի ջերմությամբ շրջապատված ճիշտ այնպես, ինչպես մեր հող ներխուժած

դիվերսանտներին շնորհվեց ազատությունը վայելելու ու ընտանեկան ջերմությունը զգալու պարզևր:

Աղոթքով հայցում ենք, որ Բարձրյալ Տերը մարդասիրությամբ ու արդարամտությամբ լցնի պետական այրերի սրտերն ու մտքերը, որպեսզի մեր երկրում ամրանան արդարությունը, խաղաղությունը, քրիստոսապատվեր սերն ու հայրենիքին պատուհասած հերթական վտանգին միասնաբար դիմակայելու ձգտումը: ԱՄԵՆ:

Միրով և հույսով լեցուն՝

Սյունյաց թեմ

Հ.Գ. Սա քաղաքական հայտարարություն չէ, այլ մարդասիրական և ազգասիրական կոչ հանուն արդարության, հավասարության, համերաշխության, խաղաղության և միասնության:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunyactem/posts/3077147202527955>

**16.12.2021**

### **Անկատար սուբվենցիոն ծրագրեր՝ Սյունիքում. որո՞նք են պատճառները**

Սյունիքի մարզում այս տարի նախատեսված 21 սուբվենցիոն ծրագրերից միայն մեկն է ամբողջությամբ իրականացվել: Անավարտ մնացածները կշարունակվեն 2022թ-ին: Թերացման պատճառներից մեկը համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն էին, նաեւ որոշ համայնքապետերի կալանավորված լինելու հանգամանքը:

Սուբվենցիայի հատկացման միջգերատեսչական հանձնաժողովը 2021-ի համար Սյունիքի մարզում 21 ծրագիր էր հաստատել՝ ընդհանուր 7 մլրդ 280 մլն դրամ նախահաշվային արժեքով: Մինչեւ հիմա մեկ ծրագիր է ավարտվել՝ Գորայք համայնքի մեքենատրակտորային կայանի համալրումը՝ 40 մլն 150 հազար դրամ արժեքով: Դրա 50 տոկոսը ֆինանսավորել է պետությունը: Եվս 5 ծրագիր կավարտվի մինչեւ տարեվերջ. Տեղ համայնքի Խոզնավար եւ Խնածախ բնակավայրերի ոռոգման ներքին ցանցի նորոգումը, Շինուհայրի մանկապարտեզի վերանորոգումը, Ագարակի փողոցների ասֆալտապատումը, Միսիան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգումը, Աճանան բնակավայրի ոռոգման ցանցի վերակառուցումը: Պետության մասնաբաժինը այս ծրագրերում կազմում է 40-ից 70 տոկոս:

Ինչո՞ւ է դանդաղել այս ծրագրերի կատարման ընթացքը: Ըստ Սյունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ Հայկ Կարախանյանի՝ համավարակի եւ պատերազմի պատճառով 2020-ի շատ ծրագրեր տեղափոխվեցին 2021թ, ու մարզում շինարարական կազմակերպությունների ներուժը չբավարարեց: Կա օբյեկտիվ մեկ պատճառ եւս:

**Հայկ Կարախանյան. «Ընտրություններ էին, համայնքապետի, աշխատակազմի փոփոխություններ էին որոշ համայնքներում, եւ դա խոչընդոտ հանդիսացավ, եւ ունեցանք նման թույլ ցուցանիշներ»:**

Քաջարանի համայնքապետարանն ընթացիկ տարվա սուբվենցիոն ծրագրերի մրցույթները օրեր առաջ է հայտարարել: Քաջարանի համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանն ու նրա տեղակալ Զոհրապ Առաքելյանը կալանավորված էին:



Առաքելյանը, որ արդեն ազատության մեջ է, ասում է՝ մրցույթ չհայտարարելու պատճառներից մեկն էլ կալանքն էր. «Պատճառը համայնքապետի ձերբակալությունը, կալանավորման խնդիրն էր, հետո՝ իմ ձերբակալությունը: Երկու ամիս ստորագրությունների պատճառով չկարողացանք մրցույթ հայտարարել: Հետո էլ համաֆինանսավորող կազմակերպությունների հետ պայմանագրերի թարմացումն էր»:

Քաջարանում սուբվենցիոն ծրագրերով այս տարի նախատեսում էին լուծել 11 շենքի ջերմամեկուսացման և էներգախնայողության, մի քանի գյուղական բնակավայրերի սաֆալտապատման խնդիրները: Ծրագրերը կիրականացվեն եկող տարի:

Զոհրապ Առաքելյան. «Չեն հետաձգվել ծրագրերը, մրցույթները հայտարարված են, պայմանավորվածություն ունենք տարածքային կառավարման նախարարության հետ, որ այս՝ 2021թվականի սուբվենցիոն ծրագրերը իրականացնենք 2022թ-ին»:

Մարզկենտրոնն Կապանում այս օրերին նորոգվում են բազմաբնակարան շենքերի 16 հարթ եւ 9 լանջավոր տանիքները: Քաղաքի Շահումյան փողոցի 2-րդ շենքի բնակիչ Լուսիկ Զոհրաբյանն ասում է՝ շենքը շահագործման է հանձնվել 60 տարի առաջ, այդ ընթացքում տանիքները չեն փոխվել.

«Տանիքներին, ինչ 60 տարին լրացել, անցել է, ոչ մեկը ձեռք չի տվել: Նոր են ժեշտերը գցում: Կաթում էր, բողոքում էինք, ով էր բանի տեղ դնում»:

Եթե ձյուն ու անձրև չգան, մինչև դեկտեմբերի վերջ տանիքների նորոգումը կավարտվի:

Ի դեպ, կառավարությունը շրջառության մեջ է դրել մի նախագիծ, որով համայնքների սուբվենցիոն ծրագրերի ներկայացման ժամկետ է սահմանվում մինչև հունվարի 20-ը՝ փետրվարի 28-ի փոխարեն: Նպատակը դրանց հաստատումն ու ֆինանսավորումն առաջ գցելն ու աշխատանքներն առավել բարենպաստ եղանակային պայմաններում իրականացնելն է:

Աղբյուրը՝

<https://hy.armradio.am/2021/12/16/%D5%BD%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4-21-%D5%BD%D5%B8%D6%82%D5%A2%D5%BE%D5%A5%D5%B6%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5/>

**15.12.2021**

### **Գեներալները երաշխավորում են Աշոտ Մինասյանի համար**

«Աշոտ Մինասյանի Պաշտպանության Խորհուրդը» հրապարակել է ՀՀ ԶՈՒ ԳՇ նախկին պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի և ՀՀ ԶՈՒ ԳՇ նախկին պետ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի համատեղ հայտարարություն-երաշխավորությունը, որում ասվում է.

«Երեկ մամուլից տեղեկացել ենք, որ Աշոտ Մինասյանին կալանավորումից ազատելու համար մեծ հեղինակություն վայելող անձինք պատրաստակամ են անձնական երաշխավորություն ստանձնել:

Մենք՝ ներքոստորագրյալ գեներալներս, անձնապես ճանաչում ենք Աշոտ Մինասյանին, քաջատեղյակ ենք նրա անցած հերոսական ուղուն և հավաստիացնում ենք, որ վերջինս երբևիցե անօրինական գործողությունների չի դիմել և չի դիմի:

Վստահաբար երաշխավորում ենք, որ Աշոտ Մինասյանը չի թաքնվի, չի խոչընդոտի քննության ընթացքին և չի կատարի օրենքով արգելված որևէ արարք:

ՀՀ ԶՈՒ ԳՇ նախկին պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրով

ՀՀ ԶՈՒ ԳՇ նախկին պետ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանց»:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/generalnery-erashkavorum-en-ashot-minasyani-hamar>

**10.12.2021**

### **Տեղի է ունեցել Աշոտ Մինասյանի Պաշտպանության Խորհրդի առաջին նիստը**

Ս.թ. դեկտեմբերի 9-ին տեղի ունեցավ Աշոտ Մինասյանի (Երկաթ) Պաշտպանության Խորհրդի առաջին նիստը:

Ընտրվեց խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Թաթուլ Պետրոսյան - արդարադատության գեներալ-մայոր
  2. Սամվել Հարոյան - մշակութային և հասարակական գործիչ
  3. Գագիկ Համբարձումյան - գեներալ-մայոր, ՀՀ ոստիկանության պետի նախկին տեղակալ
  4. Սերժ Սրապիոնյան - գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
  5. Տարոն Մինասյան - Աշոտ Մինասյանի ավագ որդի
  6. Արամ Վարդևանյան - ՀՀ ազգային ժողովի պատգամավոր
  7. Ռուբեն Մելիքյան - իրավապաշտպան, Արցախի հանրապետության նախկին ՄԻՊ
  8. Հրանտ Թոխատյան - ՀՀ ժողովրդական արտիստ
  9. Գևորգ Գևորգյան - ռազմական և քաղաքական գործիչ
  10. Միհրան Պողոսյան - փաստաբան, Աշոտ Մինասյանի պաշտպան
  11. Սամվել Թադևոսյան - սցենարիստ-ռեժիսոր
  12. Վահան Վարդանյան - հասարակական գործիչ
  13. Կարեն Հակոբյան - «Հայրենիքի վահան» պահեստագործի սպաների միության նախագահ
  14. Ռուբեն Հովհաննիսյան - մշակութային գործիչ, մասսայական հանդիսությունների ռեժիսոր
  15. Կարեն Արիստակեսյան - գրականագետ, մշակութաբան
  16. Արթուր Սահակյան - բեմադրող-ռեժիսոր
  17. Կարեն Գևորգյան - բալետմայստեր, մշակույթի վաստակավոր գործիչ
  18. Գագիկ Սարգսյան - մշակույթի գործիչ
  19. Ռազմիկ Մարտիրոսյան - սոցիոլոգ
- Քննարկվեցին կազմակերպական հարցեր, խորհրդի նախագահ ընտրվեց Թաթուլ Պետրոսյանը, համակարգող՝ Սամվել Հարոյանը:

Խորհուրդը որոշեց հետամուտ լինել Աշոտ Երկաթի դատական գործընթացին և հետևողականորեն պայքարել նրա խափանման միջոցը՝ կալանավորումը չեղարկել տալու համար:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/ashot.minasyani.pashtpanutyay.khorhurd/posts/110146911513081>

**08.12.2021**

### **Աշոտ Մինասյանի Պաշտպանության Խորհուրդի հայտարարությունը**

Ազատություն Աշոտ Երկաթին

Միրելի՛ հայրենակիցներ.

Հայտնի է, որ ս. թ. դեկտեմբերի 1-ին դատախազության միջնորդության հիմքով ՀՀ Վերաքննիչ դատարանի ապօրինի որոշմամբ կալանավորվեց արցախյան 3 հերոսամարտերի մասնակից, հաղթանակած «Միսական» ջոկատի լեգենդար հրամանատար, գնդապետ Աշոտ Մինասյանը (Աշոտ Երկաթ):

Հաղթանակներ կերտած հրամանատարը շուրջ մեկ տարի գտնվում էր դատական հետապնդումների մեջ և ի վերջո իշխանությունները, բազմաթիվ փորձերից հետո հասան իրենց իրական նպատակին՝ հրամանատարին կալանավորելուն, իսկ իբրև իրենց վարքագծի քողարկում ընտրեցին կեղծ «ապօրինի զենք-զինամթերք» պահելու մեղադրանքը:

Այս սարքովի մեղադրանքի սնանկությունը տեսանելի է անգամ ոչ մասնագիտական և անզեն աչքով, և հրամանատարը քաղաքական հետապնդումների զոհ է, ուրեմն և՛ քաղբանտարկյալ:

ՀՀ վայ-իշխանությունները փաստորեն իրականացնում են մեր դարավոր թշնամու քաղաքական պատվերը, այն է՝ մեկուսացնել արցախյան հաղթանակը կերտած հերոսներին: Անթաքույց է, որ վերջնական նպատակը՝ Սյունիքը թշնամուն նվիրաբերելու գործընթացն ավարտելու ճանապարհին բոլոր հնարավոր խոչընդոտները վերացնելն է:

Միրելի՛ հայրենակիցներ.

Հայրենիքի և նրա նվիրյալների ճակատագրի հանդեպ մտահոգությունը մեզ՝ «Ձայն հայրենեաց» հայ մտավորականների և մշակույթի գործիչների շարժմանը, «Պահեստագործի սպաներ» շարժմանը, «Հայ ազգային ճակատ» ՀԿ-ին, «Հայրենիքի վահան» պահեստագործի սպաների միությանը, քաղաքական, հասարակական, մշակութային հեղինակավոր բազմաթիվ գործիչներին մղել է ստեղծելու Աշոտ Մինասյանի պաշտպանության խորհուրդ:

Կոչով դիմում ենք Սյունիքի և ընդհանրապես Հայաստանի Հանրապետության անվտանգությամբ մտահոգ կազմակերպություններին, անհատներին, ողջ հայությանը՝ սատարելու լեգենդար հրամանատարին:

Մեր նշանաբաններն են՝ «Ազատություն Աշոտ Երկաթին» և «Ձեռքերդ հեռու սյունյաց քաջորդի բոլոր քաղբանտարկյալներից»:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/ashot.minasyani.pashtpanutyay.khorhurd/posts/108727174988388>

08.12.2021

### Էրազմուս+ տեղեկատվական օր Գորիսում

Ս.թ.դեկտեմբերի 4-ին Գորիսի պետական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի մեկնարկած Էրազմուս+ ծրագրի 2022թ. առաջարկների ներկայացման մրցույթին (<https://bit.ly/3pbhqeO>) նվիրված **Տեղեկատվական օր**:

Հանդիպմանը ներկա էին ԳՊՀ ռեկտոր Արտուշ Ղուկասյանը, պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմի ներկայացուցիչները, ուսանողները, ինչպես նաև Գորիս համայնքի ՀԿ-ների և բիզնես ոլորտի պատասխանատուները:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ա.Ղուկասյանը, որը շնորհակալություն հայտնեց Էրազմուս+ ազգային գրասենյակի ներկայացուցիչներին՝ ի դեմ գրասենյակի համակարգող Լանա Կառլովայի՝ կարևորելու Սյունիքի մարզի ներկայացուցիչների մասնակցությունն առաջարկվող ծրագրերին, որոնք միտված են տարածաշրջանում բարձրագույն կրթությանն առնչվող խնդիրների լուծմանն ու ոլորտի զարգացմանը: Հանդիպմանը Էրազմուս+ ազգային գրասենյակի համակարգող Լ. Կառլովան և Ծրագրի պատասխանատու Վ. Ղուկասյանը մանրամասն անդրադարձան ընթացիկ տարվա համար հասանելի ծրագրերին, որոնք ուղղված են կարողությունների զարգացմանը, միջազգային կրեդիտային փոխանակմանը, վիրտուալ փոխանակումներին, Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրերին, ինչպես նաև Էրազմուս Մունդուս նախագծերին:

Ավարտին հանդիպման մասնակիցներն իրենց հուզող հարցերն ուղղեցին հյուրերին: Աղբյուրը՝

<https://gorsu.am/news/%d5%a7%d6%80%d5%a1%d5%a6%d5%b4%d5%b8%d6%82%d5%bd-%d5%bf%d5%a5%d5%b2%d5%a5%d5%af%d5%a1%d5%bf%d5%be%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d6%85%d6%80-%d5%a3%d5%b8%d6%80%d5%ab%d5%bd%d5%b8%d6%82%d5%b4/>

07.12.2021

### ԳՊՀ-ին շնորհվեց հավատարմագրում 4 տարի ժամկետով

Դեկտեմբերի 6-ին գումարված ռեկտորատի ընդլայնված նիստում ռեկտոր Արտուշ Ղուկասյանը աշխատակազմին պաշտոնապես ներկայացրեց Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիանալ հավատարմագրման փաստը հավաստող ՎԿԱՅԱԿԱՆԸ՝ հաստատված ԿԳՄՄ նախարարի կողմից:

**Հավատարմագրման հանձնաժողովի 2021թ.-ի հոկտեմբերի 22-ի թիվ 59 որոշմամբ ԳՊՀ-ին շնորհվել է հավատարմագրում 4 տարի ժամկետով:**

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում. դիմում-հայտի ներկայացում՝ 18 սեպտեմբերի 2019թ., ինքնավերլուծության ներկայացում՝ 6 ապրիլի 2020թ., փորձագիտական այցի իրականացում՝ 26-29 ապրիլի 2021թ., փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 23 հուլիսի 2021թ., թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 3 սեպտեմբերի 2021թ.:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԳՊՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական գեկույցը, գեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԳՊՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրել է հետևյալը. ԳՊՀ-ն 2018 թվականին ստացել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով և, հաշվի առնելով հավատարմագրման գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման երկամյա գործողությունների ծրագիր՝ մի շարք ոլորտներում իրականացնելով նկատելի բարեփոխումներ, որոնք միտված են եղել որակի մշակույթի ձևավորմանը, կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը, ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը: ՈԱԱԿ-ը գործընթացի շրջանակներում կարևորել է նաև, թե ԳՊՀ-ն որքանով է արդյունավետ գործել արտակարգ դրության պայմաններում, ինչպես է գործել ուսումնական հաստատության որակի ապահովման համակարգը ստեղծված իրավիճակում, որքանով է պատրաստ եղել ռիսկերի կառավարմանը: Իսկ այդ ամենը ապահովվել է միայն համատեղ որակյալ աշխատանքի, պատասխանատվության, լավագույն փորձի յուրացման, նոր մարտահրավերներին համահունչ կրթության որակի ապահովման և կառավարման ներքին մեխանիզմները կատարելագործելու արդյունքում, ինչն էլ բուհի այս կարևոր ձեռքբերման հիմքն է: Ռեկտորը շնորհավորեց բոլորին երկար սպասված հաջողության համար, շնորհակալություն հայտնեց գործընթացը համակարգող, ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր Թ.Մարությանին, կրթության որակի ապահովման բաժնին՝ ի դեմս բաժնի ղեկավար Գ.Շաբունցի, ինքնավերլուծությունն իրականացնող խմբի անդամներին (Թ.Մարության, Գ.Շաբունց, Ն.Սաֆարյան, Ա.Արզումանյան, Ա.Դինունց, Ա.Գալստյան, Ն.Միրզոյան, Վ.Դանիելյան), մասնագիտական ամբիոնների վարիչներին, ղեկաններին՝ արդյունավետ ու տքնաջան աշխատանքի համար: Ռեկտորը նշեց, որ «այսօր էլ ԳՊՀ-ի գործունեությունը միտված պետք է լինի փորձագիտական գեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի իրականացմանը, որը կբերի որակական նոր ու անհրաժեշտ փոփոխությունների: Արդիականության պահանջներից բխող որակի ապահովումը շարունակական գործընթաց է և հանդիսանում է բուհի հիմնական գործառույթը»: Ռեկտորատի նիստում քննարկվեցին նաև ուսումնական ընթացիկ գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր: Պրոռեկտոր Թ. Մարությանը տեղեկատվություն ներկայացրեց օրերս ամբիոններում հրավիրված հաշվետու նիստերի և քննարկումների արդյունքների մասին, ղեկանները ներկայացրին ֆակուլտետներում ձեռնարկված քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին: Ըստ ռեկտորի հրամանի՝

ուսումնական պարապմունքները կավարտվեն դեկտեմբերի 17-ին: Միջանկյալ ստուգումները կանցկացվեն դեկտեմբերի 13-ից 17-ը, դրանց վերահանձնումները՝ 20-ից 24-ը, ոչ քննական առարկաների սահմանային ատեստավորումները կկազմակերպվեն 27-ից 30-ը, իսկ քննաշրջանը՝ 2022թ. հունվարի 3-ից 21-ը: Հանձնարարվեց դեկաններին, ամբիոնների վարիչներին՝ մինչև դեկտեմբերի 15-ը ֆակուլտետների խորհուրդներում, ամբիոնների նիստերում կազմակերպել քննարկումներ՝ 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պատշաճ կազմակերպման վերաբերյալ:

#### Հավատարմագրման հանձնաժողովի ՈՐՈՇՈՒՄ

Աղբյուրը՝ <https://gorsu.am/news/%d5%a3%d5%ba%d5%b0-%d5%ab%d5%b6-%d5%b7%d5%b6%d5%b8%d6%80%d5%b0%d5%be%d5%a5%d6%81-%d5%b0%d5%a1%d5%be%d5%a1%d5%bf%d5%a1%d6%80%d5%b4%d5%a1%d5%a3%d6%80%d5%b8%d6%82%d5%b4-4-%d5%bf%d5%a1%d6%80%d5%ab-%d5%aa/>

**05.12.2021**

**«Սյունյաց երկիրն» այսօր Խոտ-Որոտան կառուցվող այլընտրանքային ճանապարհին էր ճանապարհաշինարարները դեկտեմբերի 5-ի կիրակի օրը մասամբ էին աշխատում...**

Սակայն արդեն իսկ կատարված աշխատանքներից կարելի է ենթադրել, որ լայնահուն ճանապարհ է կառուցվում:

Շինարարությունն իրականացնում է «Ճանապարհ» ՍՊ ընկերությունը (ղեկավար՝ Էդիկ Բեգոյան):

Շատ ափսոս, սակայն, որ Խազալ կապ կոչվող լեռնանցքում վերաշինվող ճանապարհի մի հատվածում՝ բարձունքից, հայտնվում ենք աղբբեջանական հենակետի ասկյարների նշանառության տակ, ովքեր իրենց ներկայությունը ցուցանում են անթաքույց:

Իսկ կիրճում... Աջ թեւում Որոտան գյուղն է՝ անորոշության եւ սպասումների մեջ, ձախ մասում՝ Մ-2 մայրուղու վրա աղբբեջանական տխրահոչակ անցակետն է՝ ՌԴ սահմանապահ հենակետի հարեւանությամբ:

Որոտանի կիրճի աջ ափին կամ կիրճի հարավային թեւում Թասի լեռնանցքն է՝ որբացած, մեքենաների անցուղարձին կարոտ...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/syunyats-erkirn-aysor-khot-orotan-karutsvokh-aylyntranqayin-chanaparhin-er>

**03.12.2021**

**Մեծ թափով ընթանում է Ճակատեն-Գեղանուշ, Ճակատեն-Կապան ճանապարհների նորոգումը**

Աղբյուրը՝ [https://youtu.be/\\_RgafSsERx8](https://youtu.be/_RgafSsERx8)

**03.12.2021**

**Որոտանի, Շուռնուխի և Բարձրավանի բնակիչների իրավունքների խախտումներ Գորիս-Կապան ճանապարհը փակվելու հետևանքով. ուսումնասիրությունների տվյալներ**

Երեկ փաստահավաք աշխատանքներ ենք իրականացրել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Որոտան, Շուռնուխ և Բարձրավան գյուղերում, տեղի են ունեցել քննարկումներ

բնակիչների հետ: Աշխատանքները կատարվել են Գորիս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արտյոմ Աղաջանյանի և անձնակազմի աջակցությամբ:

Վեր են հանվել Գորիս-Կապան ճանապարհին առանց իրավական հիմքերի, այսպես կոչված, ադրբեջանական մաքսային ու սահմանային վերահսկողություն սահմանելու և ադրբեջանական զինված ծառայողների կողմից ճանապարհը փակելու հետևանքով մարդկանց համար առաջ եկած խնդիրները, իրավունքների խախտումները:

Նախ, Գորիս-Կապան ճանապարհի փակվելու հետևանքով շահագործվում է այլընտրանքային ճանապարհ, որն անցնում է Խոտ գյուղով և տանում դեպի Որոտան:

Ճանապարհին անանցանելի է թեթև մարդատար (ոչ ամենագնաց) ավտոմեքենաների համար:

Սահմանվել է «ՈՒՐԱԼ» ամենագնաց տրանսպորտային 1 միջոցով երթուղի: Այն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին Գորիս քաղաքից առավոտյան ժամը 7:30 դպրոցի ուսուցիչներին Գորիս քաղաքից բերում է Որոտան, ապա ճանապարհը շարունակում դեպի Շուռնուխ ու Բարձրավան և հետո հետադարձով ժամը 10:00-11:00-ի սահմաններում բնակիչներին Որոտանից տանում է Գորիս:

Այնուհետև, շաբաթվա նշված օրերին՝ ժամը 14:00-ի հատվածում Գորիսից վերադառնում է Որոտան և մյուս գյուղերը, իսկ երեկոյան ժամը 16:00-17:00-ի սահմաններում Որոտանից վերադառնում է Գորիս: Շաբաթվա երեքշաբթի և հինգշաբթի օրերին ուսուցիչներին առավոտյան ժամը 7:30 բերում է Գորիսից Որոտան և երեկոյան ժամը 16:00-17:00-ի հատվածում Որոտանից տանում Գորիս:

Այսինքն՝ գործում է ամենագնաց տրանսպորտային 1 միջոց, որը, թեև, պարտաճանաչ է, բայց ինքնին բավարար չէ, քանի որ երթուղու սեղմ գրաֆիկը, դժվարանցանելի ճանապարհը թույլ չեն տալիս մարդկանց հոգալ իրենց առօրյա կարիքները, հասցնել մեկ օրվա ընթացքում՝ մինչև մութն ընկնելը կազմակերպել նրանց տեղափոխումը՝ սպասարկելով 3 գյուղեր և մարդիկ բախվում են բազմաթիվ խնդիրների:

Նախևառաջ, խնդիրներ են առաջանում՝ կապված առողջության պահպանման իրավունքի և բուժօգնության հասանելիության հետ: Որոտանում, օրինակ, բնակիչները տարբեր բժշկական հարցերի համար պայմանավորվածություններ ունեն բուժհաստատություններում, բայց ժամերի տարբերության կամ ճանապարհի դժվարանցանելիությամբ պայմանավորված՝ չեն կարողանում սահմանված ժամերին հասնել բժշկի:

Կան նաև հրատապ բուժօգնության հասանելիության խնդիրներ: Այս հարցն արդիական է նաև այն պատճառով, որ նշված բնակավայրերում ապրում են տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ու առողջության պահպանումը, հատկապես պահանջում է հրատապ ու արդյունավետ արձագանք, դեղորայքի արագ մատակարարում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արագ հոսպիտալացում:

Կան դեպքեր, երբ մարդիկ չեն կարողանում ներկայանալ պլանային բուժհետազոտությունների՝ ճանապարհի խոչընդոտների պատճառով. այդ ճանապարհին անանցանելի է ոչ ամենագնաց մեքենաների և անգամ դժվարանցանելի է ամենագնաց մեքենաների համար: Այս խնդիրներն առկա են Շուռնուխում, Բարձրավանում, Որոտանում: Հատկապես խնդրահարույց է շտապ բժշկական օգնության հասանելիությունը:

Մրվել են խնդիրները՝ կապված հաշմանդամության սահմանման գործընթացի և դրա համար անհրաժեշտ հետազոտություններ անցնելու հետ:

Մասնավորապես, մինչև ճանապարհի փակվելը այն մարդկանց համար, որոնք առանց այն էլ ունեն տեղաշարժման կամ առողջական այլ խնդիրներ, դժվարությամբ, բայց հնարավոր էր մեկ օրվա ընթացքում ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ բժշկական հետազոտություններ անցնելով: Ներկայիս դժվարամատչելի միակ ճանապարհով տրանսպորտային երթուղու սահմանափակ ժամերի պայմաններում դա իրականացնել մեկ օրում գրեթե անհնար է օբյեկտիվորեն:

Այսինքն՝ հաշմանդամություն ունեցող մարդիկ հայտնվում են լրացուցիչ քաշքշուկների մեջ: Մրա պատճառով էլ արդեն կան դեպքեր, երբ մարդիկ պարզապես հրաժարվում են հաշմանդամության կարգավիճակի դիմելուց, միայն թե խուսափեն քաշքշուկների «գլխացավանքից»:

Հաշմանդամություն սահմանելու հարցում դժվարություն է ներկայացնում նաև Միասնական սոցիալական ծառայություն դիմելը՝ գործընթաց սկսելու և փորձաքննություն անցնելու համար, քանի որ ծառայությունը գտնվում է Գորիսում:

Դժվարացել է սննդի ձեռքբերման կազմակերպումը, առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, երեխաների խնամքի պարագաների ձեռք բերումը: Հացը մատակարարվում է ԱԻՆ ՈՒԱԶ ամենազաց մեքենայով: Առկա են անհատական դժվարություններ (օրինակ՝ կան բնակիչներ, որոնք չեն կարողանում մասնավոր կամ անհատական կարգով կատարել գնումներ, ասենք, Գորիսից կամ Կապանից, քանի որ մեքենաներն անցանելի չեն):

Որոտանում բնակվող երեխաների մի մասը չի կարողանում հաճախել Գորիսում սպորտի և պարի խմբակների. սա խնդրահարույց է, քանի որ երեխաները լուրջ հաջողություններ են գրանցել:

Երեխաները չեն կարողանում նաև հաճախել ուսուցիչների մոտ լրացուցիչ դասընթացների Գորիս քաղաք: Գնալու դեպքում խնդիր է նաև երեխաների վերադարձը Գորիսից՝ կապված ժամերի անհարմարությունների հետ (օրինակ՝ ժամը 13-ին կամ 14-ին դասը վերջացնող երեխան պետք է ևս մի քանի ժամ սպասի տրանսպորտային միջոցի ժամին):

Բոլոր ծնողները նշել են, որ իրենց համար առաջնային հարցը ճանապարհի անվտանգության ապահովումն է, ինչը հնարավոր չէ լուծել այլընտրանքային ճանապարհի բարեկարգմամբ՝ հատկապես հաշվի առնելով, որ երեխաների դասից վերադարձին արդեն մեքենան գալիս է երեկոյան ժամի: Որոշ ծնողներ նշել են, որ անգամ անհատական ամենագնաց մեքենա ունեցողների համար է իրենց երեխաների անվտանգության ապահովումն առաջնահերթ, քանի որ ճանապարհն անմիջականորեն դիտարկվում է աղբբեջանական զինված ծառայողների կողմից:

Այն բնակիչները, ում աշխատանքը կապված է ճանապարհային շինարարության կամ բեռնափոխադրման հետ կամ պահանջում է ամենօրյա այցեր աշխատանքի՝ Գորիս քաղաք կամ այլ վայր, զրկվել են աշխատանքից ու ընտանիքի եկամտի աղբյուրից կամ էլ բաժանվել են ընտանիքից և չեն կարող միասին լինել, ստիպված են բնակվել այլ վայրում, որ կարողանան աշխատանքի հաճախել: Բնակիչներից մեկն, օրինակ, տեղեկացրել է, որ



աշխատանքը չկորցնելու համար ստիպված բաժանվել է ընտանիքից և փաստացի չի բնակվում տանը. իր տուն է գալիս 15 օրը մեկ անգամ:

Բոլոր գյուղերում էլ, այդ թվում՝ Որոտանում առաջ են եկել գյուղատնտեսական ապրանքների (օրինակ՝ խաղող, արքայանարինջ և այլն) իրացման խնդիրներ: Բանն այն է, որ մինչև ճանապարհի փակվելը տարբեր գնորդներ էին գալիս գյուղեր կամ իրենք գյուղերի բնակիչներն էին վաճառքի համար իրենց ապրանքը տանում Գորիս կամ այլ վայրեր:

Որոտանի այն բնակիչները, որոնք ուսանող են և սովորում են Գորիսում, զրկվել են դասերի բնականոն հաճախելու հնարավորությունից. դասերը սկսվում են ժամը 9:00-ին, իսկ այդ ժամին երիտասարդները հասնել չեն կարողանում: Ուսանողների համար խնդիր է նաև Գորիսում դասերի ավարտից հետո Որոտան վերադարձը, քանի որ լինում են դեպքեր, երբ ամենազնաց մեքենայով երթուղային տրանսպորտային միջոցն արդեն մեկնած է լինում:

Որոտանում պարզվեց, որ այս պահին դպրոցը չունի ռուսերենի ուսուցիչ և այդ առարկան ստիպված դասավանդում են այլ ուսուցիչներ (ոչ մասնագիտական), քանի որ ճանապարհի դժվարանցանելիության պատճառով հղիության վիճակում գտնվող ուսուցիչը չի կարողանում հաղթահարել ճանապարհը: Իսկ Որոտանի ուսուցիչներն առհասարակ ստիպված են Գորիսից դուրս գալ առավոտյան ժամը 7:30-ից:

Խնդիրներ են առաջ գալիս նաև այն դեպքերում, երբ պետք է բանկերում գործարքներ անեն, բայց բանկերի աշխատանքային ժամերով պայմանավորված՝ չեն կարողանում հասցնել:

Արդեն նշել եմ, որ Որոտան տանող այլընտրանքային ճանապարհն ադրբեջանական զինված ծառայողների անմիջական դիտարկման ներքո է. բնակիչների անվտանգության և իրավունքների վերականգնման համար միակ ելքը նրանց հեռացումն է:

Բացի այն, որ որևէ հիմք չունեցող ադրբեջանական, այսպես կոչված, սահմանային ու մաքսային վերահսկողության հետևանքով մարդիկ զրկվել են Գորիս-Կապան ճանապարհով [M2] ազատ ու անվտանգ տեղաշարժվելու միջազգայնորեն երաշխավորված իրավունքից, այլընտրանքային շահագործվող ճանապարհն օբյեկտիվորեն չի լուծում իրավունքների այն խախտումները վերացնելու հարցը, որ առաջ է եկել ադրբեջանական իշխանությունների, նրանց զինված ծառայողների անօրինական արարքներով (օրինակ՝ անվտանգություն, բնականոն կյանքի վերականգնում և այլն):

Նշվածից բացի, Որոտան, Շուռնուխ և Բարձրավան գյուղեր (նույնը վերաբերում է նաև Նոր Առաջաձորին) տանող ճանապարհի փակումը մարդու իրավունքների և մեկուսացման լուրջ խնդիրներ է առաջ բերել նաև այն առումով, որ եթե մինչև նոյեմբերի 11-ը՝ ճանապարհը փակվելը, Գորիսից Կապան ճանապարհը անցնում էր այս գյուղերով ու հետևաբար՝ ընդհանուր տեղաշարժն էլ էր այս գյուղերով, ապա հիմա այս գյուղեր գալիս են միայն կա՛մ բնակիչները, կա՛մ հենց նպատակային գյուղեր այցելողները: Նաև իրանական բեռնատար մեքենաներն են երթնելում:

Ուստի, անհրաժեշտ էլքը մեկն է՝ ադրբեջանական զինված կամ այլ ծառայողներ մեր համայնքների հարևանությամբ կամ համայնքների միջև ճանապարհներին չպետք է լինեն, պետք է ստեղծվի անվտանգության ապառազմականացված գոտի:

Դա է ՀՀ բնակիչների իրավունքները վերականգնելու ճանապարհը: Սա ամբողջությամբ բխում է միջազգային փորձից ու ԵԱՀԿ, ՄԱԿ-ի այլ միջազգային չափանիշներից:

Ոչ ոք իրավունք չունի անտեսել մարդու իրավունքների և հումանիտար խնդիրները սահմանների որոշման հետ կապված գործընթացում և վերջ:

Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցները կներկայացնեն միջազգային համապատասխան կառույցներին, ինչպես նաև ՀՀ մարմիններին և ՀԿ-ներին:

Արման Թաթոյան

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/posts/215070027478604>

**01.12.2021**

### **Որոտան տանող այլընտրանքային միակ ճանապարհն ադրբեջանական զինված ծառայողների անմիջական դիտարկման ներքո է. ՄԻՊ**

Որոտան տանող այլընտրանքային միակ ճանապարհն ադրբեջանական զինված ծառայողների անմիջական դիտարկման ներքո է. բնակիչների անվտանգության և իրավունքների վերականգնման համար միակ ելքը նրանց հեռացումն է:

Բացի այն, որ որևէ հիմք չունեցող ադրբեջանական, այսպես կոչված, սահմանային ու մաքսային վերահսկողության հետևանքով մարդիկ զրկվել են Գորիս-Կապան ճանապարհով [M2] ազատ ու անվտանգ տեղաշարժվելու միջազգայնորեն երաշխավորված իրավունքից, այլընտրանքային շահագործվող ճանապարհն օբյեկտիվորեն չի լուծում իրավունքների այն խախտումները վերացնելու հարցը, որ առաջ է եկել ադրբեջանական իշխանությունների, նրանց զինված ծառայողների անօրինական արարքներով (օրինակ՝ անվտանգություն, բնականոն կյանքի վերականգնում և այլն):

Այսօր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ղեկավարած աշխատանքային խումբն ուսումնասիրել է նաև այս պահին շահագործվող այլընտրանքային միակ ճանապարհի դիտարկվող հատվածները (կից լուսանկարներում դիտարկվող ոչ բոլոր մասերն են)՝ Գորիս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արտյոմ Աղաջանյանի և անձնակազմի հետ միասին:

Նշվածից բացի, Որոտան, Շուռնուխ և Բարձրավան գյուղեր (նույնը վերաբերում է նաև Նոր Առաջածորին) տանող ճանապարհի փակումը մարդու իրավունքների և մեկուսացման լուրջ խնդիրներ է առաջ բերել նաև այն առումով, որ եթե մինչև նոյեմբերի 11-ը՝ ճանապարհը փակվելը, Գորիսից Կապան ճանապարհը անցնում էր այս գյուղերով ու հետևաբար՝ ընդհանուր տեղաշարժն էլ էր այս գյուղերով, ապա հիմա այս գյուղեր գալիս են միայն կա՛մ բնակիչները, կա՛մ հենց նպատակային գյուղեր այցելողները: Նաև իրանական բեռնատար մեքենաներն են երթնելու:

Ուստի, անհրաժեշտ էլքը մեկն է՝ ադրբեջանական զինված կամ այլ ծառայողներ մեր համայնքների հարևանությամբ կամ համայնքների միջև ճանապարհներին չպետք է լինեն, պետք է ստեղծվի անվտանգության ապառազմականացված գոտի:

Դա է ՀՀ բնակիչների իրավունքները վերականգնելու ճանապարհը: Սա ամբողջությամբ բխում է միջազգային փորձից ու չափանիշներից:

Ոչ ոք իրավունք չունի անտեսել մարդու իրավունքների և հումանիտար խնդիրները սահմանների որոշման հետ կապված գործընթացում և վերջ:

Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցները կներկայացնեն միջազգային համապատասխան կառույցներին, ինչպես նաև ՀՀ մարմիններին և ՀԿ-ներին:

Կազմող՝ Ս. Ալավերդյան